ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

29.11.19թ. N 06/11.2/6738-19

ՀՀ Շիրակի մարզ,
Գյումրի համայնքի ղեկավար՝
պարոն Սամվել ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բալասանյան

Մեր 2019 թվականի նոյեմբերի 12-ի N 06/11.2/6738-2019 գրությամբ տրամադրված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 83 եզրակացության 1-ին կետում առկա է վրիպակ:

Ձեզ ենք տրամադրում ՀՀՇիրակիմարզիԳյումրիքաղաքիԳարեգինՆժդեհի 1-իննրբանցքիհարևանությամբ,մետաղյաթիթեղիպահեստկառուցելունպատակով, 0.38 համակերեսովհողամասնէներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալենթակառուցվածքներիօբյեկտներիհողերիցարդյունաբերության, ընդերքօգտագործմանևայլարտադրականնշանակությանօբյեկտներիհողերի՝պահեստարանն երիգործառնականնշանակությանփոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության ուղղված տարբերակը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀՇիրակիմարզիԳյումրիքաղաքիգլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքով՝

Invalid signature

X

ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN NUNE 5714640420

Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 83

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և/կամ գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

| Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 0.38 հա մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր | 0.38 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի՝ պահեստարանների գործառնական նշանակության հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Գյումրի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահի՝* | | |
| | | Վ. Վերմիշյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Տ. Մանուկյան |

Երևան, «28» «նոյեմբերի» 2019թ.

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի /բնակավայրի / գլխավոր հատակագծի փոփոխության վերաբերյալ շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների

| N | Հեղինակը, ամսաթիվը, համարը | Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունները |
|---|---|---|---|---|
| 1. | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 2019-10-09, 01/16.1/16442-19 | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի 1-ին նրբանցքի հարևանությամբ գտնվող էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների 0.38 հա մակերեսով հողամասն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ դիրքորոշում հայտնել չի կարող, քանի որ ներկայացված հողաշինարարական գործում բացակայում են էներգետիկայի բնագավառի՝ «Գազպրոմ Արմենիա» (մարզային գազամատակարարման-գազաբաշխման մասնաճյուղ (ԳԳՄ) և «Տրանսգազ» ՍՊԸ) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ների դիրքորոշումները: | ընդունվել է | |
| | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 2019-11-06, 01/16.1/18907-19 | Ի լրումն 09.10.2019թ. թիվ 01/16.1/16442-19 գրության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտնում է, որ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի 1-ին նրբանցքի հարևանությամբ գտնվող էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների 0.38 հա մակերեսով հողամասն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի: | | |
| | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 2019-11-13, 01/16.1/19728-19 | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտնում է, որ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի 1-ին նրբանցքի հարևանությամբ գտնվող հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ իր կարծիքը ներկայացրել է 06.11.2019թ. թիվ 01/16.1/18907-19 գրությամբ (կցվում է):<br>Առդիր՝ 1 էջ:<br>Ի լրումն 09.10.2019թ. թիվ 01/16.1/16442-19 գրության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտնում է, որ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի 1-ին նրբանցքի հարևանությամբ գտնվող էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների | | |

| | | | |
|---|---|---|---|
| | | օբյեկտների 0.38 հա մակերեսով հողամասն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի: | |
| 2. | Առողջապահության նախարարություն<br>2019-10-10, ԱԺ/16682-19 | Ի պատասխան Ձեր 2019 թվականի հոկտեմբերի 4-ի N 03/11.2/5777-2019 գրության՝ Առողջապահության նախարարությունում քննարկվել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի 1-ին նրբանցքի հարևանությամբ գտնվող 0.38 հա մակերեսով հողամասը, մետաղյա թիթեղի պահեստ կառուցելու նպատակով, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի՝ պահեստարանների գործառնական նշանակության փոխելու մասին առաջարկությունը, որի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:<br>Միաժամանակ, հաշվի առնելով, որ պահեստի կառուցման և հետագա շահագործման ընթացքում հնարավոր է աղմուկի մակարդակի գերազանցումներ, անհրաժեշտ է պահեստի նախագծման, կառուցման և շահագործման ընթացքում պահպանել ՀՀ իրավական ակտերով պահանջվող աղմուկի թույլատրելի մակարդակները: | ընդունվել է |
| 3. | Արտակարգ իրավիճակների նախարարություն<br>2019-10-10, 01/15.7/7210-2019 | առաջարկություններ և առարկություններ չունի | ընդունվել է ի գիտություն |
| 4. | Էկոնոմիկայի նախարարություն<br>2019-10-04, 05/9789-2019 | առաջարկություններ և առարկություններ չունի | ընդունվել է ի գիտություն |
| 5. | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>2019-10-09, 01/14.2/22744-19 | առաջարկություններ և առարկություններ չունի | ընդունվել է ի գիտություն |
| 6. | Շրջակա միջավայրի նախարարություն<br>2019-10-11, 1/02.2/12724-19 | Ի պատասխան Ձեր 2019 թվականի հոկտեմբերի 4-ի N03/11.2/5777 գրության հայտնում եմ, որ շրջակա միջավայրի նախարարությունը Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոցի 1-ին նրբանցքի հարևանությամբ գտնվող հողամասի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ առարկություններ չունի:<br>«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7)-րդ կետի «ա» ենթակետի պայմանին (1500մ²-ից ավելի կառուցապատման մակերես) համապատասխանելու դեպքում նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: | ընդունվել է |
| 7. | Կադաստրի կոմիտե<br>2019-10-10, ՍՊ//7718-2019 | առաջարկություններ և առարկություններ չունի | ընդունվել է ի գիտություն |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Շիրակի մարզպետարան<br>2019-10-08, 01 //08401-2019 | առաջարկություններ և առարկություններ չունի | ընդունվել է ի գիտություն |
| | Շիրակի մարզպետարան<br>2019-11-12, 01 //09545-2019 | առաջարկություններ և առարկություններ չունի | ընդունվել է ի գիտություն |
| 9. | ՀՀ ոստիկանություն<br>2019-10-08, 17/17/24169-19 | առաջարկություններ և առարկություններ չունի | ընդունվել է ի գիտություն |
| 10. | Ճարտարապետների միություն | սահմանված ժամկետում կարծիք չի ներկայացվել | |
| 11. | Հայաստանի շինարարների միություն<br>2019-10-07, ՀՇՄ 80 | առաջարկություններ և առարկություններ չունի | ընդունվել է ի գիտություն |